ԷԼԱԴԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

## (ուսուցչի առաջավոր փորձը)

Արտադասարանական աշխատանքները, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձեւավորման, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Այդ տեսանկյունով էլ սխալ կլիներ ճանաչողական հետաքրքրությունների ձեւավորումը սահմանափակել միայն ուսումնական աշխատանքի շրջանակներում, չէ որ դպրոցականի հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազան տեսակներում: Ճիշտ է նկատում Գ. Ի. Շչուկինան, որ ուսուցումը պետք է մշտապես լրացվի գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը եւ դպրոցականների բազմակողմանի գործունեության կազմակերպմանն ուղղված արտադասարանական աշխատանքով:[1] Ուրեմն սովորողների հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ուսուցման, այլեւ արտադասարանական աշխատանքների գործընթացում: Քանի որ արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձեւերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության եւ ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը ու ճանաչողական հետաքրքրության ձեւավորումը:

Արտադասարանական աշխատանքը, ինչպես մատնանշում է Մ. Մանուկյանը, այդ առումով շատ առավելություն ունի դասի համեմատությամբ: Նրա բովանդակությունը խիստ կանոնարկված չլինելով, թույլ է տալիս ավելի օպերատիվ կերպով օգտագործել սովորողների զարգացման համար գիտության, տեխնիկայի, մշակույթի եւ արվեստի նորագույն նվաճումները:[2] Արտադասարանական աշխատանքը պայմաններ է ստեղծում դպրոցականների բազմակողմանի գործունեության հետազոտական, գեղարվեստական, տեխնիկական եւ այլ կազմակերպման համար, որի ընթացքում կարող են զարգանալ երեխաների ոչ միայն ճանաչողական հետաքրքրությունները, այլեւ նրանց հակումները, ընդունակությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջավոր ուսուցիչների որոնող ստեղծագործ միտքը զբաղված է նրանով, թե ինչպես հաղթահարել սովորողների որոշ մասի անտարբերությունն ուսման նկատմամբ, ինչպես

կազմակերպել ուսուցման գործընթացը, որպեսզի աշակերտը ոչ միայն ընկալի հաղորդվող գիտելիքները, այլեւ սովորի խորհել, դատել, վերլուծել եւ ինքնուրույն հետեւություններ կատարել: Ուստի, ուսուցիչների ստեղծագործական որոնումները պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի այդ նպատակի համար օգտագործվի սովորողների թե՛ ուսումնական եւ թե՛ արտադասարանական գործունեությունների միասնությունը: Ինչպես ուսուցման գործընթացը, այնպես էլ սովորողների արտադասարանական գործունեությունը պետք է առավելագույն չափով հագեցված լինի այնպիսի բազմաբնույթ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներով, որոնք սովորողներին հրահրեն գիտելիքներով գործառնելու եւ որոնելու դրված նպատակի իրագործման նոր, ավելի կատարելագործված ուղիներ, որոնք զարգացնում են նրանց ոչ միայն մտածողական ակտիվությունը, այլեւ կամային ջանքերը:

Այսպիսով, արտադասարանական աշխատանքի արդյունավետ պլանավորումն ու կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի պարզ կերպով տեսնել եւ ուսումնասիրել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ուղղությունը, խորությունն ու կայունությունը եւ նպատակասլաց կերպով զարգացնել դրանք:

Քննարկվող հիմնահարցի հետ սերտորեն կապված, մեր ուսումնասիրությունների արդյունքների ընդհանրացման հիման վրա (ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում Ստեփանակերտի թիվ 1, 2, 7, 8, 9 դպրոցներում, մանկավարժական փորձուսուցման ընթացքում ուսանողների հետ դասալսման եւ արտադասարանական աշխատանքների պլանավորման ու կազմակերպման ժամանակ) կոնկրետ օրինակներով ներկայացնենք որոշ ուսուցիչների առաջավոր փորձը:

Հարկ ենք համարում, որ այսօր ազգային դպրոցի վերակառուցման շրջանում ուսուցչի առաջավոր փորձի ուսումնասիրությունը եւ տարածումը մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է: Ուստի, ուսումնասիրելով առաջավոր փորձը, հետազոտող մանկավարժը հնարավորություն է ստանում բացահայտելու ուսուցչի գործողությունների եւ այդ գործողությունների արդյունքների միջեւ եղած օբյեկտիվ կապերը, պարզելու այն պայմանները, որոնց առկայությամբ դպրոցում դաստիարակության եւ ուսուցման այս կամ այն մեթոդներն ու հնարները տալիս են դրական արդյունքներ: Հիրավի, առաջավոր փորձի տակ հասկանում ենք ուսուցչի բարձր վարպետությունը, այսինքն՝ այնպիսի պրակտիկան, որը տալիս է մանկավարժական բարձր արդյունք: Կարեւոր ենք համարում նաեւ ընդգծել այն հանգամանքը, որ ուսուցիչների առաջավոր փորձի ուսումնասիրումը եւ բացահայտումը լավ օրինակ է դառնում հատկապես ուսանողների՝ ապագա սկսնակ ուսուցիչների համար, որոնք դեռեւս նոր են տիրապետում

մանկավարժական վարպետության հիմունքներին: Հենց այդ մոտեցմամբ ենք դիտարկում հոդվածում ներառված փաստավավերագրական նյութերը:

Այսպես, օրինակ, Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան (Արցախյան պատերազմի հերոս) թիվ 2 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության «Տարվա լավագույն ուսուցչուհի» Իրինա Սարինյանը իր դասերը այնպես է կառուցում, որ դրանց սահմաններից դուրս են փոխադրվում սովորողների ճանաչողական գործունեության շատ ձեւեր: Դասի շրջանակներից ուսումնական գործընթացի այդպիսի ելքն առավել եւս անհրաժեշտ է, քանի որ շատ աշակերտների համար ուսուցման գործընթացում ծնված ճանաչողական հետաքրքրությունը դառնում է ինքնակրթության հզոր խթան: Հայ գրականությունից արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձեւերի (խմբակներ, էքսկուրսիաներ, Արցախյան գոյամարտին նվիրված գեղարվեստական երեկոներ, հայ գրերի ստեղծման եւ Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված միջոցառումներ եւ այլն) կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցչուհուն ապահովելու դաստիարակության եւ ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության այնքան կարեւոր գծի զարգացումը, ինչպիսին ճանաչողական հետաքրքրությունն է: Դիտարկման ժամանակ նաեւ նկատել ենք, որ ուսուցչուհու կողմից մանկավարժական բազմազան մեթոդների, հնարների ու միջոցների օգտագործումը նախապայմաններ է ստեղծում ապահովելու սովորողների ակտիվությունը, ինչպես դասապրոցեսում, այնպես էլ արտադասարանական աշխատանքների գործընթացում ճանաչողական հետաքրքրությունների ձեւավորման ու զարգացման միտումով: Ուշագրավ է նաեւ նշել այն ուսանելի խորհուրդները, որ ուսուցչուհին տալիս էր փորձուսուցման մասնակից ուսանողներին՝ դասալսման եւ արտադասարանական աշխատանքների կատարման արդյունքները ընդհանրացնելիս,- ուսանողներ՝ ապագա սկսնակ ուսուցիչներ, մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ ստեղծագործորեն աշխատող ուսուցիչը մշտապես վերլուծում է իր աշխատանքը եւ գնահատում դրա արդյունքները: Նկատելով, որ արդյունքները չեն համապատասխանում նշված նպատակին, նա փնտրում է այդ տարբերության պատճառները եւ հետո փորձում է այլ ձեւով լուծել դրված խնդիրները, փնտրում է նոր մոտեցում, հնարներ, դիդակտիկական միջոցներ, գործնականում փորձում է դրանց արդյունավետությունը: Լավ իմացեք, որ այդպես են ընթանում ուսուցչի մանկավարժական վարպետության աստիճանական աճը, սովորողների դաստիարակության եւ ուսուցման նոր միջոցների ստեղծումն ու ստուգումը:

Հայ ուսուցիչների ուսուցիչ Աղայանը սովորեցնում է, որ չպետք է թույլ տալ, որ աշակերտի հետաքրքրությունը մարի, պետք է պահպանել, ուղղություն տալ, խորացնել այն՝ հետաքրքրությունը վերլուծելով իմանալ ու պահանջել,

իսկ նման պահանջ կարելի է ձեւավորել միայն ուսուցիչների անմիջական ներգործության միջոցով:[3] Անշուշտ, ուսումնական գործընթացի արդյունավետությունը շատ բանով կախված է սովորողների ճանաչողական հետաքրքրություններից, նրանց ուսումնական գործունեության խելամտորեն պլանավորումից ու կազմակերպումից: Այդ նկատառումով էլ Հովհ. Թումանյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի փորձառու ուսուցիչներ՝ Ս. Հարությունյանը, Ռ. Դադայանը, Յու. Խաչատրյանը, Էդ. Հայրապետյանը, Ժ. Կասյանը եւ ուրիշներ, ուսուցման ընթացքը եւ արտադասարանական աշխատանքները կազմակերպելիս, խստիվ հաշվի են առնում սովորողների առարկայական ու ընդհանուր զարգացման մակարդակը եւ ծրագրային նյութը հաղորդում այնպիսի ընդգրկմամբ ու ձեւով, որ հետաքրքիր է դառնում, այլ ոչ թե ձանձրույթ պատճառում աշակերտներին: Այդ նպատակով նաեւ ուշադրություն են դարձնում (մեր դիտարկումները կատարել ենք ուսանողների հետ դասալսման ժամանակ), որ յուրաքանչյուր թեմա ուսուցելիս կամ արտադասարանական պարապմունք կազմակերպելիս ոչ միայն խորացվեն ու ամրակայվեն այդ թեմայից աշակերտներին ծանոթ հատկանիշները, այլեւ բացահայտվեն նրանց անծանոթ ու նոր առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, դասապրոցեսում, արտադասարանական աշխատանքներում ծրագրային նյութը (պատմությունից, գրականությունից, աշխարհագրությունից, ֆիզիկայից, քիմիայից, կենսաբանությունից եւ այլ առարկաներից) պարզաբանելիս, վարպետ ուսուցիչները ոչ միայն հիշատակում են ծրագրում ու դասագրքում եղած հանրահայտ տեղեկությունները, այլեւ նյութի խորացումը ապահովելու նպատակով տարբեր սկզբնաղբյուրներից ծանոթացնում այդ գիտությունների ուղղությամբ վերջին տարիներին կատարած հետազոտությունները, այսինքն՝ սովորողներին զինում ոչ միայն ուսումնական, այլեւ համաուսումնական կարողություններով, ունակություններով, ձեւավորում նրանց մեծ ճանաչողական որոնողական աշխատանք կատարելու կարողություններ, հմտություններ:

Ուսումնասիրությունների ժամանակ մեր ուշադրությունը գրավեց Եղիշե Չարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Ս. Հովհաննիսյանի լավագույն փորձը: Նա աշխարհագրությամբ առավել հետաքրքրվող դպրոցականներից կազմակերպում է խմբագրական կոլեգիա՝ ընդգրկելով նաեւ գրական ստեղծագործական հակում ունեցող աշակերտների: Աշակերտների հետ միասին որոշվում է ամիսը մեկ կամ երկու անգամ լույս ընծայել «Պատանի բնախույզ», «Պատանի աշխարհագետ» խորագրով պատի թերթ (ի դեպ, նշենք, որ ընդօրինակելու նպատակով մասնակից ենք դարձրել նաեւ փորձուսուցման ուսանողներին) եւ տարբեր համարներով բովանդակել հետեւյալ նյութեր՝ «Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի, Արցախի, Ռուսաստանում բնակվող հայկական համայնքների

բնակչության աշխարհագրությունը», «Մեր հանրապետության գյուղատնտեսության եւ արդյունաբերության զարգացման ճյուղերը», «Հետաքրքրաշարժ տեղեկություններ», «Մեր հին ու նոր սովորությունները» եւ այլ նյութեր:

Հանձնարարվում էր աշակերտներին տարբեր սկզբնաղբյուրներից, թերթերից, ամսագրերից եւ այլ նյութերից համեմատությունների միջոցով որոնել ու ճշգրտել հայ բնակչության աճը, նյութական ռեսուրսների զարգացումը հայկական համայնքներում: Ուշագրավ էր հատկապես պատի թերթում տպագրված՝ աշխարհագրական էքսկուրսիայի արդյունքները ընդհանրացնող աշակերտների ստեղծագործական շարադրությունները: Թերթում տպագրվում են աշխարհագրական հարց ու պատասխաններ խորագիր՝ «Մեր հարցերը», մեր հարցերը լինում են թեմատիկ եւ ազատ»,-«խնդրվում է հարցերի պատասխաններն ընթեռնելի ձեռագրերով, մաքուր հայերենով եւ գրագետ գրել ու գցել թերթի փոստարկղիկը, հարցերին լավագույն պատասխանողները պետք է խրախուսվեն, պարգեւատրվեն գովասանագրերով խմբակի կողմից»:

Դպրոցի երիտասարդ տնօրենի (Վ. Գաբրիելյան) եռանդուն գործունեության շնորհիվ կոլեկտիվի աշխատանքները այնպես են կազմակերպվում, որ խթանում է յուրաքանչյուր ուսուցչի նախաձեռնությունը, եւ իրենց գործին նվիրված ուսուցիչները չեն զլանում իրենց պարտականությունները կատարել հանուն սովորողների արտադասարանական աշխատանքների բարձր արդյունավետության:

Թիվ 7 դպրոցը լինելով ԱրՊՀ մանկավարժական փորձուսուցման բազա, վկայակոչում ենք նաեւ քիմիայի եւ կենսաբանության ուսուցիչ Լ. Շաքարյանի ուսանելի փորձը:

Ծրագրային նյութը խորացնելու նպատակով արտադասարանական աշխատանքը կազմակերպում է հետեւողականորեն, նպատակաուղղված, որոշակի համակարգով: Այսպես, օրինակ, տարիների ընթացքում ուսուցչուհին նպատակասլաց կերպով աշակերտների մեջ զարգացնում է մեծ հետաքրքրություն ուսումնական առարկաների նկատմամբ: Սկզբնական շրջանում ուսուցչուհին ելնելով թեմայի անհրաժեշտությունից, նրա առանձնահատկություններից եւ պահանջներից, մշակում է աշխատանքային պլան: Չմոռանալով ինքնակրթության կարեւորությունը, պլանում տեղ է հատկացնում աշակերտների ինքնուրույն աշխատանքների կատարմանը (փորձեր, ռեֆերատներ, ինֆորմացիաներ, ձեռքի աշխատանքներ եւ այլն): Կիսամյակային առաջադրանքների բաժնում սյունակներ է առանձնացնում այն բանի համար, որ աշակերտները գրառումներ կատարեն իրենց հետազոտական, որոնողական աշխատանքների արդյունքներից: Ավելի բարդ պարապմունք է անցկացնում ագրոքիմիական խմբակում, ուր ուսումնասիրվում են հողերի, բուսական հումքի բաղադրությունը, միաժամանակ աշակերտները որոշակի աշխատանք

են տանում դպրոցի քիմիայի կաբինետը կահավորելու, քիմիական սարքեր պատրաստելու գծով: Ուսուցչուհին եւ նրան կցված փորձուսուցման ուսանողները ստեղծված քիմիայի խմբակը վերածեցին «Պատանի քիմիկոս» ընկերության, որն ուներ առանձին սեկցիաներ (բաժիններ)՝ ագրոքիմիական սարքեր պատրաստող, բարձր դասարանցիների համար պոլիմերների սեկցիա եւ այլն: Այդ սեկցիան էլ պատրաստում է էքսկուրսիաներ դպրոցական կոլեկտիվի ստեղծած պոլիմերների թանգարանի համար: Լինելով այդ սեկցիաների մասնակիցը, դասարանից-դասարան, մի սեկցիայից մյուսը փոխադրվելով, ակտիվորեն մասնակցելով արտաուսումնական գործունեությանը, աշակերտները ոչ միայն խորացնում են իրենց գիտելիքները գիտության զարգացման վերաբերյալ՝ Լոմոնոսովի, Մենդելեեւի, Զելինսկու, ստեղծագործական որոնումների մասին, ոչ միայն ծանոթանում են ժամանակակից գիտության նվաճումների հետ, այլ ձեռք են բերում փորձարարական ու հետախուզական կարողություններ ու հմտություններ:

Արտադպրոցական աշխատանքի ըստ առարկայի հետեւողականորեն բարդացող համակարգն ապահովում է ոչ միայն քիմիայի նկատմամբ սովորողների հետաքրքրության զարգացումը, այլեւ ձեւավորում է նրա ճանաչողական հետաքրքրությունը, որպես անձնավորության կայուն գիծը: Այդ բնույթի աշխատանքը տարածում է ստացել դպրոցներում աշակերտական գիտական «Պատանի մաթեմատիկոսների», «Պատանի բանասերների», «Պատանի պատմաբանների», «Պատանի տեխնիկների», «Պատանի բուսաբանների» եւ այլ ընկերությունների ձեւով:

Կարեւոր է նշել, որ ԱրՊՀ մասնագիտական ամբիոններն՝ ուսանողների գիտական ընկերությունները խնդիր են դրել մանկավարժական փորձուսուցման ընթացքում կազմակերպել եւ սովորողներին մասնակից դարձնել բուն գիտության հիմունքներին, նրանց մեջ զարգացնել հետազոտական մոտեցումը եւ փորձարարական կարողությունները: Այդ պատճառով ընկերությունը տարվա ընթացքում գիտական զեկուցմամբ հանդես է գալիս տեսական սեմինարներում եւ անց է կացնում փորձ՝ իր ընտրած գիտական բնագավառում: Ուրեմն դպրոցում սովորողներին իմացական գործունեության մղելու համար արտադասարանական խմբակներում եւ այլ աշխատանքներում նրանց ինքնուրույն ստեղծագործական գործունեության կազմակերպումն է:

Սովորողների ճանաչողական ունակությունները պետք է զարգանան այնպես, որ նրանք ոչ միայն կարողանան ճանաչել իրականությունը, այլեւ որոշակի նորություն մտցնեն իրականության մասին եղած ըմբռնումների, հասկացությունների մեջ: Ստեղծագործական աշխատանքը սովորողից պահանջում է խոր ու կայուն գիտելիքներ, հոգեւոր ուժերի լարում, ստացած գիտելիքները կյանքում կիրառելու ունակություններ, ակտիվ ուշադրություն եւ

դժվարությունները հաղթահարելու մեծ կամք: Այսպիսով արտադասարանական աշխատանքի տարածված ձեւը առարկայական խմբակներն են, որը նպաստում է սովորողների ինքնուրույն մտավոր գործունեության զարգացմանը, գիտության նկատմամբ հետաքրքրությունների ձեւավորմանը: Խմբակի պարապմունքների ընթացքում աշակերտները ձեռք են բերում ինքնուրույն փորձեր դնելու, դիտումներ կատարելու հմտություններ: Օրինակ, վերոնշյալ դպրոցներում կենսաբանության, բուսաբանության արտադասարանական խմբակում սովորողները աճեցնում են գյուղատնտեսական բույսեր, խնամում կենդանիներ, պայքարում բույսերի վնասատուների դեմ եւ ուշադրություն դարձնում կենդանիների կենսաբանական առանձնահատկությունների, կյանքի օրինաչափություններին, բնության պահպանության միջոցառումներին եւ այլն: Դրանով դպրոցը լուծում է իր առջեւ դրված գոյապահպանական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության խնդիրները: Նման ինքնուրույն աշխատանքներ կատարելիս ակտիվանում է աշակերտների մտածողությունը: Այդ տեսակետից ուշագրավ է թիվ 8, 9 դպրոցների քիմիա եւ կենսաբանության, պատմության եւ այլ առարկաների ուսուցիչների՝ Ս. Հայրապետյանի, Մ. Խաչատրյանի, Ս. Հարությունյանի, Մ. Սահակյանի եւ ուրիշների առաջավոր փորձը:

Նրանք լայն հնարավորություն են ստեղծում սովորողների ինքնուրույն ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Ինչպես ուսուցման գործընթացում, այնպես էլ արտադասարանական գործունեության ընթացքում: «Պատանի բնասերների», «Պատանի պատմաբան» խմբակի անդամների ուժերով ուսուցիչները հաճախակի կազմակերպում են մասսայական միջոցառումներ՝ ցերեկույթներ ու երեկույթներ, որտեղ ցուցադրում են հետաքրքիր փորձեր, հերբարիումներ, հնագիտական հավաքածուներ, լույս են ընծայում պատի թերթեր, որոնք բազմակողմանի տեղեկություն են հաղորդում կենսաբանության պատմության նորագույն նվաճումների մասին:

ՀՀ կրթության Ազգային ինստիտուտի բարեփոխումների կենտրոնի՝ Ստեփանակերտի մասնաճյուղում ուսուցիչների վերաորակավորման դասընթացներում նրանց հետ հաղորդակցվելուց եւ անհրաժեշտ փաստագրական նյութեր ուսումնասիրելուց պարզել ենք, որ վերոհիշյալ առաջավոր փորձը կարելի է տեսնել նաեւ Մարտունու, Հադրութի, Մարտակերտի, Շահումյանի, Շուշիի, Քաշաթաղի, Քարավաճառի շրջանների դպրոցներում, որոնց մասին «Առաջավոր փորձ» խորագրով հոդվածներ են տպագրվում «Ազատ Արցախ», «Լուսարար», «Կրթությունը եւ գիտությունը Արցախում» եւ այլ պարբերականներում:[4]

Հեղինակային (Բ. Բաղրյան, Մ. Արզումանյան, Լ. Մարտիրոսյան, Լ. Հարությունյան եւ ուրիշներ) հոդվածներում համակողմանիորեն լուսաբանվում

է մեր հանրապետության բարեփոխվող դպրոցների գործունեությունը, ուսուցիչների դասալսումների, առարկայական մեթոդ-միավորումների առաջավոր փորձը,[5] ինչպես նաեւ մայր Հայաստանի, Սփյուռքի կրթօջախների առաջավոր փորձը եւ առաջադրում են վեր հանել այդ ասպարեզում եղած թերություններն ու բացերը՝ դրանք շտկելու միտումով: Սովորողների գիտելիքները մշտապես հարստանալու, նորը որոնելու, առաջադրված նպատակին հասնելու սկզբունքն ավանդույթ է դարձել վերոհիշյալ դպրոցներում: Ուսուցիչների փորձի դիտարկումից կարելի է եզրակացնել, որ ճանաչողական գործունեությունն ակտիվանում է առանձնապես այն ժամանակ, երբ սովորողները կարողանում են իրենց ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները օգտագործել պրակտիկ հարցեր լուծելիս: Օրինակ, սովորողների գեղարվեստական ինքնագործունեության փառատոները եւ մրցույթ-ստուգատեսերն աշակերտներին ճանաչողական հետաքրքրությունների ձեւավորման եւ ստեղծագործական ունակությունների զարգացման հրաշալի միջոց են, որոնք իրականացվում են արտադասարանական աշխատանքների ընթացքում: Այդ մրցույթներն ու փառատոներն աշակերտների ստեղծագործական աշխատանքի խրախուսման ու խթանման հուսալի միջոց են: Դրանցում իմի են բերվում տարիների ընթացքում երեխաների ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, բացահայտվում նոր կարողություններ ու հմտություններ: Այս տիպի միջոցառումներից՝ «ասմունքողները մեր մեջ են», «փնտրում ենք շնորհալի երեխաներ»: Մրցույթ ստուգատեսին կարող են մասնակցել դպրոցի առաջինից-տասներորդ դասարանի աշակերտները: Կարելի է կազմակերպել մրցույթներ տարրական, միջին, բարձր դասարանների կամ պարզապես միայն զուգահեռ դասարանների միջեւ: Աշակերտների ակտիվացման համար սահմանվում են մրցանակներ՝ «զուգահեռ դասարաններից լավագույնին», «ամենաակտիվ դասարանին», «լավագույն ասմունքողին», «հանդիսատեսի մրցանակ» եւ այլն: Մրցույթի յուրաքանչյուր մասնակից այս կամ այն ձեւով խրախուսվում է, իսկ խրախուսանքը դաստիարակության հուսալի մեթոդ է:

Այսպիսով, դպրոցի ուսումնադաստիարակչական համալիրում իրենց կարեւորագույն տեղն են զբաղեցնում նաեւ արտադասարանական աշխատանքները, որոնք կարգավորում են դասից դուրս երեխայի ազատ ժամանակը: Աշխատանքի այս ձեւն ավելի կազմակերպված բնույթ է ստանում, առավել արդյունավետ է դառնում դպրոցներում: Դրանք նպաստում են ուսումնական առարկայի դաստիարակչական հնարավորությունների ավելի լրիվ օգտագործմանը, ուսուցչին լայն հնարավորություններ են ընձեռում ուսուցումն ավելի սերտորեն կապելու կյանքին, նպաստավոր պայմաններ են ստեղծում դպրոցականների իմացական հետաքրքրությունների զարգացման, նրանց մեջ գիտելիքներն ինքնուրույնաբար լրացնելու հմտությունների

/

ծեւավորելու, հանրակրթական կարողություններով եւ հմտություններով զինելու համար:

Մանկավարժական փորձը վկայում է, որ վերոհիշյալ դպրոցներում թե ուսուցման, թե արտադասարանական բազմաբնույթ աշխատանքներում միշտ էլ կարեւորվել է աճող սերնդի հայեցի դաստիարակության եւ կրթության հարցերը, որոնք այսօր առաջատար խնդիր են համարվում ազգային դպրոցի վերակառուցման, կրթական համակարգի նոր բարեփոխումների շրջանում: Դա անհնարին է առանց սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ծեւավորման եւ ստեղծագործական ունակությունների զարգացման:

Այսպիսով, ուսումնասիրություններից ստացված արդյունքների վերլուծությունը եւ առաջավոր ուսուցիչների փորձը հաստատել են, որ դասագործընթացի, արտադասարանական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը կախված է՝ ա) ուսուցչի մասնագիտական, մեթոդամանկավարժական պատրաստվածությունից ու լավատեսությունից, բ) աշակերտների նկատմամբ նրա վստահելի վերաբերմունքից, գ) դասարանի կոլեկտիվի գործունեության տարբեր ձեւերի զուգակցումից ու կազմակերպումից, դ) դպրոցականների աշխատանքի օբյեկտիվ խրախուսումից ու գնահատումից, ե) նրանց անհրաժեշտ օգնություն ցույց տալու մշտական պատրաստությունից եւ այլ հանգամանքներից:

Հենց այդ միտումով էլ մեր ուսումնասիրության կարեւորագույն խնդիրներից մեկը արտադասարանական աշխատանքների, ընդհանրապես դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների ոլորտում նկատվող առաջավոր փորձի ընդհանրացումն ու տարածումն է՝ դրանով իսկ ուսանողներին՝ ապագա սկսնակ ուսուցիչներին, որակապես նախապատրաստել մանկավարժական աշխատանքի:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Գ. Ի. Շչուկինա, Մանկավարժություն, Երեւան, 1969թ., էջ 349:
2. Ս. Մ. Մանուկյան, Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները, Երեւան, 1980թ., էջ 7-8:
3. Դ. Աղայան, Խորհրդածություններ դաստիարակության վրա, Երկերի ժողովածու, հ. 4, Երեւան, 1950թ., էջ 344:
4. «Ազատ Արցախ», 2003թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների համարները:
5. «Լուսարար», 2004, 2005թթ., մարտ, ապրիլ ամիսների համարները: